ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-7-3-Ա

ք. Երևան 08.07.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի հուլիսի 8-ի նիստում քննարկեց 2021 թվականի մայիսի 17-ին արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված՝ Սեյրան Տիգրանյանի անունով (Երևան, Հանրապետության 58, բն.32, ԱՄ) «Царь Петр I» (No20200832) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցում: Տվյալ դեպքում հայտարկված «Царь Петр I» նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն զուգորդվում է համայն Ռուսիո առաջին կայսր Պետրոս առաջինի (Պետրոս Մեծ, Պյոտր Ալեքսեևիչ Ռոմանով 1682 – 1725թթ.) հետ, ով ռուսական պատմագրության կողմից համարվում է 18-րդ դարում Ռուսաստանի զարգացման ուղղությունը կանխորոշած նշանավոր պետական գործիչներից մեկը և հայտարկված նշանի գրանցումը սպառողներին մոլորության մեջ կգցի ապրանքները արտադրող երկրի վերաբերյալ հարցում և պատճառ կհանդիսանա կապ ենթադրելու տվյալ երկրի և հայտարկված նիշի միջև, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնությունը հայտնի է օղիների արտադրությամբ և սպառողը կարող է ենթադրել, որ նշված ապրանքները արտադրված են հենց Ռուսաստանի Դաշնությունում, ինչպես նաև «Царь Петр I»

նիշի գրանցումը մոլորության մեջ կգցի սպառողներին հայտում նշված ապրանքների, մասնավորապես՝ «հայկական կոնյակ» ապրանքի վերաբերյալ հարցում: Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված նկատառումներին, այն է՝ «Հայտարկվող ապրանքային նշանով մակնշվող ապրանքների հարցում սպառողի մոտ հարցեր չեն առաջանա, քանի որ այն արտադրվելու է հիմնականում Ռուսաստանում և Գերմանիայում, ընդ որում՝ հայտատուի պատվերով այն Հայաստանի Հանրապետությունում ներկայանալու է «FUERST POTEMKIN» ապրանքային նշանով», ապա տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ՀՀ քաղաքացի Սեյրան Տիգրանյանի կողմից գրանցման է ներկայացվել «Царь Петр I» ապրանքային նշանը, այլ, ոչ թե «FUERST POTEMKIN» ապրանքային նշանը, հետևաբար, Ձեր կողմից ներկայացված նկատառումները չեն կարող հիմք հանդիսանալ հայտարկված նիշը գրանցելու հարցում:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները այն մասին, որ փորձաքննության բաժնի կողմից կայացված որոշումը իրավաչափ է, սակայն կոլեգիան վերջնական եզրակացություն չունի, քանի որ հայտատուն պետք է ներկայացներ նոր փաստարկներ, որոնց լույսի ներքո կկարողանա կայացնել վերջնական եզրակացություն:

Բողոքարկողը ներկայացրեց իր փաստարկները այն մասին, որ հայտարկված նշանը սպառողին մոլորության մեջ չի գցի ապրանքի ծագման հարցում, քանի որ տվյալ ապրանքը արտադրվելու է Ռուսաստանի Դաշնությունում: Նաև ներկայացրեց առաջարկ տվյալ ապրանքային նշանը գրանցել սահմանափակելով ապրանքների ցանկը՝ «Ռուսաստանում արտադրված օղի» ապրանքով, որի արդյունքում սպառողը մոլորության մեջ չի ընկնի ապրանքի ծագման հարցում:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների

քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում 6 կողմ և 3 դեմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «Царь Петр I» (No20200832) ապրանքային նշանը գրանցել հայտարկված բոլոր ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ